Հավելված N 2
2023 թվականի հունվարի 23-ին կնքված
«1032-11002/23-Տ» պայմանագրի

# ԴՐԱՄԱՇՆՈՐՀԱՅԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ N2

1. Ընդհանուր տեղեկատվություն

| | |
|---|---|
| Ծրագրի անվանում | Տարեց և (կամ) հաշմանդամություն ունեցող անձանց տնային պայմաններում խնամքի ծառայություններ |
| Դրամաշնորհի N | ԱՍՀՆ-ԴՄ-ՏՊԽԾ-23/4-1 |
| Դրամաշնորհատու կազմակերպություն | ՀՀ ԱՍՀՆ |
| Դրամաշնորհառու կազմակերպություն | «Տարեցների առողջության և խնամքի ապահովման ասոցիացիա» ՀԿ |
| Ծրագրի իրականացման ժամանակահատված | 01.01.2023-31.12.2023 |
| Հաշվետու ժամանակահատված | 01.07.2023-30.09.2023 |
| Ներկայացման օր | 07.11.2023 |
| Հաշվետվության պատասխանատու<br>(անուն, ազգանուն, պաշտոն) | Արթուր Թորոսյան, նախագահ |

2. Բովանդակային հաշվետվություն

2.1. Խնդրում ենք թվարկել աշխատանքային պլանով և պայմանագրի թիվ 1 հավելվածով սահմանված միջոցառումների (այսուհետ՝ միջոցառում) շրջանակում կատարման ենթակա գործողությունները հաշվետու ժամանակահատվածի համար:

1. Կենցաղային սպասարկման ծառայության մատուցում
2. Բժշկական օգնության և սպասարման ծառայության մատուցում
3. Սոցիալ-հոգեբանական, խորհրդատվական ծառայության մատուցում

2.2. Խնդրում ենք նկարագրել ծրագրի առաջընթացն՝ ըստ սահմանված աշխատանքային պլանի (Գանտի աղյուսակ) և միջոցառումների, նշելով՝ Ձեր կողմից իրականացված գործողությունները և ստացված արդյունքները հաշվետու ժամանակահատվածի համար: Որքանով են նշված գործողությունները նպաստել տվյալ ծրագրի խնդիրների/նպատակի իրականացմանը:

Ծրագրի հաշվետու ժամանակահատվածում 25 շահառուի փոխարեն ծառայություններ է ստացել 30 խոցելի, կողմնակի անձի օգնության կարիք ունեցող մեծահասակ, որոնցից 20-ը բնակվում է միայնակ: 29 շահառու ունի ՄՍԾ ուղեգիր:
Հաշվետու ժամանակահատվածում շահառուներին մատուցվել են ծրագրով նախատեսված ծառայությունները՝ կենցաղային սպասարկում, բուժքույրական սպասարկում, սոցիալ-հոգեբանական, խորհրդատվական ծառայություն: Վերջիններս մատուցվել են ըստ նախապես որոշված ժամանակացույցի և ըստ անհրաժեշտության՝ արձագանքելով շահառուի հրատապ կանչին նաև շաբաթ և կիրակի օրերին: Ծառայությունները մատուցվել են ժամը 09:00-18:00-ն ընկած ժամանակահատվածում, առանձին դեպքերում, ըստ շահառուի հրատապ կարիքի, նաև այդ ժամանակահատվածից դուրս ժամերի: Ա խմբում ընդգրկված շահառուների թիվը 7-ն է:

| |
|---|
| Վերջիններս ծառայություններն ստանում են շաբաթական 4-5 անգամ և ըստ անհրաժեշտության, իսկ Բ խմբի շահառուները՝ 3-4 անգամ և ըստ անհրաժեշտության: Ա խմբի շահառուներն ստացել են նյութական աջակցություն՝ տակդիրներ ամբողջ ամսվա համար: Փորձարկվել է շահառուների ֆունկցիոնալության և խնամքի կարիքի գնահատման մասնագիտական մի սանդղակ, որը թույլ է տալիս օբյեկտիվ պատկերացում կազմել անձի ինքնասպասարկման հմտությունների, ֆունկցիոնալության մասին և ավելի հասցեական տրամադրել խնամքի ծառայությունը: Ծրագրի աշխատակիցների համար կազմակերպվել է հմտությունների կատարելագործման դասընթաց, ինչը շարունակական բնույթ է կրում և ուղղված է ծառայությունների որակի բարելավմանը: Շահառուների շրջանում իրականացվել է հարցում ծառայությունից գոհունակության աստիճանի, որակի վերաբերյալ: Բացառապես բոլոր շահառուները շեշտել են ծրագրի արդյունավետությունը և շարունակվելու կարևորությունը: |

Խնդրում ենք նշել հաշվետու ժամանակահատվածում մշակված նյութերի համացանցում տեղադրված հղումները՝ առկայության դեպքում (օրենսդրական առաջարկություններ, համառոտագրեր, հաշվետվություններ, մեդիա պրոդուկտներ և այլն)

| |
|---|
| Առկա չեն: |

2.3. Խնդրում ենք ներկայացնել հաշվետու ժամանակահատվածում քաղած դասերը և/կամ ծագած խնդիրները, որոնք խոչընդոտել են ծրագրի գործողությունների իրականացմանը:

| |
|---|
| Որպես դժվարություն առանձնացվել է ծրագրի շահառուների մշակութային ակտիվ ժամանցի ապահովումը, քանի որ շահառուները, պայմանավորված իրենց առողջական խնդիրներով, հիմնականում մերժում են միջոցառումների մասնակցելու առաջարկները: Այդ բացատրվում է նաև ներմշակութային գործոնով: Ժամանցային տարրերն ապահովվում են անհատական մակարդակում ծրագրի սոցիալական աշխատողի և սոցիալական սպասարկողների միջոցով՝ տարեդարձի նշում, տոների նշում: |

2.4. Խնդրում ենք թվարկել հաջորդ հաշվետու ժամանակահատվածի համար նախատեսված գործողությունները (կցելով նաև շահառուների ցուցակը):

1. Կենցաղային սպասարկման ծառայության մատուցում
2. Բժշկական օգնության և սպասարման ծառայության մատուցում
3. Սոցիալ-հոգեբանական, խորհրդատվական ծառայության մատուցում

2.5. Խնդրում ենք նշել, Ձեր կողմից իրականացված այն գործողությունները, որոնք նախատեսված չեն եղել ծրագրի աշխատանքային պլանով, բայց իրականացվել են ծրագրի նպատակին հասնելու համար:

| |
|---|
| Գործողությունները հիմնականում իրականացվել են ըստ նախատեսված պլանի: 25 շահառուի փոխարեն ծրագրից օգտվել է 30 շահառու: |

Կ Ա Տ Ա Ր Ո Ղ
«Տարեցների առողջության և խնամքի
ապահովման ասոցիացիա» ՀԿ-ի նախագահ ՝
Ա. Թորոսյան

Digitally signed by GHAZAZYAN LIANA
6201810706
Date: 2023.11.07 10:05:21 AMT

(ստորագրություն)